

**Հովհաննես Թումանյանի «Արտավազդ» անավարտ դրաման.
գրության շարժառիթները և գործողությունների հնարավոր ընթացքը**

Բոյաջյան Աստղիկ

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-55>

Հանգուցային բառեր. Մովսես Խորենացի, գրականագիտական մեկնություններ, Վերնատուն, Բանահյուսական քննություն

Նախաբան

Հովհաննես Թումանյանի ստեղծագործական ուղին հարուստ է տարբեր ժանրային փորձարկումներով: Ամենայն հայոց բանաստեղծը տարբեր միշտ առանձնահատուկ համակրանք է ունեցել դրամայի նկատմամբ և ասվածի պայացույցը կարելի «Արտավազդ» դրաման:

19-րդ դարը հայ գրականության պատմության մեջ նշանավորվում է խորքային վերափոխումներով, որոնք պայմանավորված էին ազգային-հասարակական կյանքի զարթոնքով, լուսավորական գաղափարների տարածմամբ և ազգային ինքնագիտակցության ձևավորմամբ: Այս ժամանակաշրջանում գրականությունը աստիճանաբար դուրս է գալիս միջնադարյան ավանդույթի սահմաններից և ձեռք բերում աշխարհիկ բնույթ՝ դառնալով հասարակական կյանքի արտացոլման և ազգային խնդիրների բարձրաձայնման կարևոր հարթակ: Գրական լեզվի ժողովրդականացումը, խոսակցական տարրերի ներթափանցումը և գրական արևելահայերենի կայացումը նպաստում են ընթերցող լայն շրջանակների ձևավորմանը և գրականության սոցիալական դերակատարման ընդլայնմանը:

Դարաշրջանի երկրորդ կեսին հայ գրականության մեջ առավել ընդգծվում են իրավաշտական (թեալիստական) միտումները, որոնք նպատակ ունեն պատկերելու ժողովրդի առօրյա կյանքը, սոցիալական հակասությունները, բարոյական խնդիրները և ազգային ճակատագրի հիմնախնդիրները: Հայ գրականության շրջանակներում ձևավորված գաղափարական, գեղագիտական և լեզվաճանաչական սկզբունքները նախադրյալ հանդիսացան 20-րդ դարասկզբի գրական գործընթացների խորացման համար: Գրողները սկսում են անդրադառնալ անհատի և հասարակության փոխհարաբերությանը, մարդու ներաշխարհին, ինչպես նաև ազգային գոյության պահպանման ուղիներին: Այս շրջանում գրականությունը դառնում է ոչ միայն գեղարվեստական ինքնարտահայտման միջոց, այլև ազգային-դաստիարակչական ու գաղափարական պայքարի կարևոր գործիք, ինչի հողի վրա էլ ձևավորվում են այն գրական սկզբունքներն ու արժեքները, որոնք հետագայում իրենց ամբողջական արտահայտությունն են գտնում Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններում:

Հովհաննես Թումանյանը հանդես է գալիս որպես գրական անցումային շրջանի առանցքային ներկայացուցիչ, որի երկերում միահյուսվում են նախորդ դարաշրջանի ռեալիստական ավանդույթներն ու նոր ժամանակի փիլիսոփայական և գաղափարական որոնումները:

Հովհաննես Թումանյանի ստեղծագործական ուղին հարուստ է տարբեր ժանրային փորձարկումներով: Ամենայն հայոց բանաստեղծը միշտ առանձնահատուկ համակրանք է ունեցել դրամայի նկատմամբ և ասվածի պայացույցը կարելի է համարել «Արտավազդ» դրաման: Դրաման այդպես էլ մնաց անավարտ, բայց դրա շուրջ հեղինակի կատարած հետազոտական աշխատանքն ու մեզ հասած փոքրիկ հատվածներն արժանի են առանձին քննության:

Հողվածի նպատակն է ներկայացնել Հովհաննես Թումանյանի «Արտավազ» անավարտ դրաման, գրության շարժառիթները, դրա շուրջ եղած տարակարծությունները և գրականագիտական կարծիքները, ինչպես նաև դիտարկել դրամայի գործողությունների հնարավոր ընթացքը և ավարտը:

Նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրը՝ ժամանակակիցների հիշողությունների, գրականագիտական կարծիքների և բնագրային նյութի հիման վրա ուսումնասիրել Հովհաննես Թումանյանի «Արտավազ» դրաման:

Թեման արդիական է, քանի որ դրամայում արծարծված գաղափարները հետագայում արտացոլվել են ժամանակաշրջանի այլ գրողների ստեղծագործություններում և դարձել են կարևոր դիտակետ Արտավազի կերպարի նորովի քննության համար:

Հիմնամաս

Գաղտնիք չէ, որ Հովհաննես Թումանյանը նորարար էր և սիրում էր «փորձարկումներ» անել տարբեր ժանրերում, առանձնահատուկ վերաբերմունք ուներ դրամայի ժանրի նկատմամբ, սակայն այն հանգամանքը, որ Թումանյանը բազմաթիվ նախափորձեր է արել դրամաներ գրելու, քչերին է հայտնի: Արամ Ինճիկյանը, անդրադառնալով Թումանյանի անավարտ գործերին, առանձին հատված է տրամադրում դրամաներին: Նա նշում է, որ դեռ դպրոցական տարիքից Թումանյանը հետաքրքրված էր այդ ժանրով, կարդում էր Շիլլեից թարգմանված գործերը, իսկ ավելի ուշ կարդաց նաև Շեքսպիրի դրամատիկական գործերը:

Դերենիկ Դեմիրճյանը Վերնատան տարիները հիշելիս խոսում է նաև Թումանյանի գրական հետաքրքրությունների մասին. «Մենք սկսեցինք մեր հավաքություններից դուրս նաև պարապել: Տանը պատրաստվում էինք և ամեն շաբաթ հավաքվում էինք «Վերնատանը», քննադատում էաքիլեսի, Սոֆոկլեսի, Եվրիպիդեսի, Շեքսպիրի, Բայրոնի և այլ կլասիկների: Թումանյանը Շեքսպիրի մի քանի տրագեդիաներին լավ էր ծանոթ: Ուսումնասիրում էր առանձնապես «Հավլետը», համեմատում էր ռուսերեն և հայերեն թարգմանությունները, նայում անգլերեն-ռուսերեն բառարանները, դրանց միջոցով ճշտում զանազան ֆրազներ: Այնուհետև Թումանյանը շատ էր ծրագրում ողբերգություններ գրել Արտաշես Բ-ի և նրա որդի Արտավազի մասին: Ես ուշի ուշով հետևում էի նրա մտքերի ընթացքին» [1, 25]:

Հարազատների և ընկերների հետ ունեցած մտերմական զրույցների ժամանակ, հաճախակի անդրադառնալով գրականության մեջ իր ամենասիրելի տեսակին՝ դրամատուրգիային և դրամատուրգի իր կոչմանը, Թումանյանը խոստովանել է նաև դրամաներ գրած լինելու փաստը. «Դու դեռ չգիտես, որ ես դրամաներ էլ ունեմ գրած, որ ես դրամատուրգ եմ...», ասել է նա իր դուստր Նվարդին, երբ սա Հովհանյան դպրոցի 6-րդ թե 7-րդ դասարանում էր: Հետագայում Մարիամ Թումանյանին ևս խոստովանել է, որ իրեն դրամատուրգ է գգում և մտածում է, որ իր իրական կոչումը դրամաներ գրելն է. «Դրամա գրելը բանաստեղծություն հորինել հո չէ, որ կարողանամ այդպես շատ գրել: Տարիներ պիտի աշխատեմ, որ մի բան դուրս գա: Ես հո չեմ կարող դրանց պես տարին 2-3 դրամա գրել» [7, 529-530]:

Հետագա ուսումնասիրությունները թույլ են տալիս ենթադրել, որ Թումանյանը հաճախ անավարտ է թողել գրված դրամաները՝ այրելով դրանք: Այս մասին իմանում ենք Նվարդ Թումանյանի հուշերից, որտեղ պատմում է Ռոմանոս Մելիքյանի հետ Թումանյանի ունեցած զրույցներից մեկի մասին. «Ես ինձ դրամատուրգ եմ համարում: Գրած էլ ունեի՝ «Արտավազը», «Հովհաննես թագավորը» և ուրիշները, ու ոչնչացրի» [6, 206]:

Մա է պատճառը, որ դրանց մասին կամ առհասարակ չի հիշատակվում, կամ պահպանվում են միայն պատարիկներ: 1893-ին Հովհաննես Թումանյանը սկսում է առաջին նախափորձերը արձակ ժանրում: Շեքսպիրի դրամաների բացահայտ ազդեցությամբ հեղի-

նակը նախընտրում է գրել պատմական թեմայով և սկսում է ուսումնասիրել ժամանակաշրջանն ու դրա մասին եղած հիշատակումները. «1893 թվականին մտածեցի մի բան հյուսել մեր աշխարհաշէն Արտաշեսի մեծ վշտերից և նրա մեծ որդու՝ նախանձուտ Արտավազդ Երկրորդի կրքերից: Այդ նպատակով սկսեցի ուսումնասիրել Արտաշեսի ընտանեկան կյանքի առասպելախառն և փոթորկալի պատմությունը» [3, 18]:

Նամակներից մեկում, որը հասցեագրված էր Անուշավան Աբովյանին, հեղինակը նշում է, որ սկսել է ուսումնասիրել առասպելի նյութը. «Այսպիսի հանգամանքների մեջ ես չեմ կարողանում պարապել, մանավանդ սիրտս էլ չի տալիս: Սակայն այս անվերջ անքուն գիշերները ինձ ա՛յնքան ժամանների, բանաստեղծության նյութ են տալիս, որ թե ծովերը թանաք դառնան, անտառները՝ գրիչ, չեն վերջացնիլ: Մի քանի մեծ բաներ եմ սկսել: Մեկով («Արտավազդ Բ») շատ հետաքրքրվեցին մեր պատմագետ լիտերատուրները և առհասարակ գրականական շրջանը. շատ հավանեցին հիմնադրության ձևն ու եղանակը և խոստացան իրանց աջակցությունը, խորհուրդները, գրադարանները բաց անել իմ առջև» [5, 136]:

Նույն շրջանում գրված այլ նամակներում ևս թումանյանը խոսում է իր նախաձեռնության մասին: Այսպես՝ Արսեն Դտոյանին ուղղված նամակում գրում է. «Իմ «Արտավազդի» բանը լավ է երևում: Դու այժմ մի երկրում ես, որտեղ շատ բան կլինի մնացած հին ժամանակներից: Քո գիտեցած և լսած ժողովրդական երգերդ կգրես ու կուղարկես ինձ... Մանականալի բառերը բացատրիր, մեկ էլ գրիր ինձ, թե այդտեղ մեկին մյուսի վրա սիրահարեցնելու համար ինչ միջոց են գործ դնում կամ ինչ ծաղիկ և ինչպես. հետո ատել տալու համար» [5, 135]:

Նամակներից զգալի է, որ թումանյանը սկսում է առանձնահատուկ ոգևորությամբ, սակայն այդպես էլ ավարտին չի հասցնում: Անավարտ դրաման ունենում է երկու հրատարակություն: Առաջինը՝ 1994 թվականին, թումանյանի երկերի ժողովածուում, իսկ երկրորդը՝ 2022 թվականին ավելի լրամշակված տարբերակով, իսկ 1894-ին թումանյանը գրել է իր «Խորենացու «Տենչայր Սաթենիկ հատվածի առթիվ»» հոդվածը: Թեման թումանյանին հետաքրքրել է ավելի վաղ շրջանից, մասնավորապես Էպոսի ուսումնասիրության շրջանակներում: Թումանյանը հաճախ է անդրադառնում առասպելաբանությանը և դրա չվերծանված էջերին. մասնավորապես նրա երկերի ուսումնասիրություններ բաժնում հանդիպում ենք բազմաթիվ էջերի՝ նվիրված Էպոսին և առասպելներին:

Հատվածի մասին մանրամասն տեղեկություններ ստանալու համար թումանյանը սկսում է ուսումնասիրել բանագետների՝ հարցի շուրջ եղած բոլոր թեր և դեմ մեկնությունները, բայց չգտավ այն պատասխանը, որը փնտրում էր. «Այդ հատվածում ես որոնում էի մի ավելի սիրուն և խորհրդավոր տեսչանք, որ կարող էին տալ սիրահարված թագուհուն «առասպելեալ ասող» գողթան երգիչները՝ մտածելով, որ, անկասկած, դրա բանալին ժամանակն ու ժողովուրդը մեզ պետք է լինեին հասցրած» [7, 528]:

Թումանյանը առաջնորդվում է հետաքրքիր տրամաբանությամբ: Ըստ նրա՝ եթե ասացողները պատմել են, որ վիշապագունները գողացել են Արտավազդին և նրա փոխարեն դև են դրել, և մարդկանց մեջ մնացել է այդ հավատը չար ուժերի նկատմամբ, եթե հարսի և փեսայի զլխին մինչ օրս ոսկի-արծաթ են շաղ տալիս, եթե դարբինները դեռ հարվածում են սալին, որ արբանան Արտավազդի կապերը, ապա ժողովրդի մեջ պետք է որ պահպանված լինեն նաև Սաթենիկի հետ կապված պատմություններ: Ուսումնասիրելով թեման՝ թումանյանը նշում է, որ ինչպես առասպելի յուրաքանչյուր հատված, այդ հատվածը ևս ժողովրդի հյուսածն է, և ժողովուրդը կարող է հաճախ հերոսին վերագրել իրողություններ, որոնք իրականության հետ կապ չունեն:

Անդրադառնալով Արտավազդին՝ թումանյանը նշում է. «Կրակը – հունարեն Հիֆիոսը, լատիներեն վուլկան, գոթերեն վերա, գերմաներեն վիլունդր – դարբին-կաղ. թևով – բայց

ընկնում է և բռնում են ազդրերը: Կաղ երկու ոտով, որովհետև կրակի բոցը ծոմովում է. թևով է – թողնում է, բայց ընկնում է, միշտ ներքևում է «անոտ» և «անգլուխ»:

Տարբերությունը հեքիաթների մեջ զբաղվում են գետնի տակ սարերի ոգիները-կարլիկները ու գաճաճները և հսկաները՝ անձավներում:

Վիլունդր – Արտավազդ» [4, 339]:

Դարբին-Արտավազդ կապը կարծես թե ակնհայտ է:

Թումանյանը ընդգծում է Արտավազդի կրակային էությունը և մեկնաբանության մեջ նշում է նաև ընկալման առասպելական, դիվային կերպը: Հեղինակը շատ լավ ծանոթ էր նաև համաշխարհային բանահյուսական գործերին և Արտավազդի կերպարի մեկնությունը տանում է հենց այդ ուղղությամբ:

Ինչպես արդեն նշեցինք, Թումանյանը հողվածը գրելու շրջանում ուսումնասիրել էր թեմայի վերաբերյալ բոլոր բանահավաքների կարծիքները, տեղյակ էր Արտավազդի կերպարի շուրջ եղած բոլոր կարծիքներին, սակայն նախընտրությունը տալիս է Խորենացու տեսակետին: Այս մասին է վկայում այն հանգամանքը, որ վերնագրային «Արտավազդ» գրության ներքևում՝ փակագծերի մեջ, հանդիպում ենք նախանձ բառը: Հետաքրքիր է, որ Մաթենիկի մասին խոսելիս Թումանյանը նշում է, որ առասպելի պարագայում որոշ փաստեր կարող են ժողովրդի կողմից հորինված կամ չափազանցված լինել, սակայն Արտավազդի պարագայում Խորենացու մեջբերած հատվածը դիտարկվում է որպես բացարձակ ճշմարտություն: Փորձենք վերլուծել այն հատվածները, որոնք հասել են մեզ:

Չովհաննես Թումանյանը, ըստ երևույթին, դրաման պետք է բաժաներ մի քանի գլուխների, որից առաջինը պետք է նվիրված լիներ Արտաշես թագավորին, և դրամայի մեզ հասած հատվածն սկսվում է հենց նրա նկարագրությամբ. «Նա վարձատրեց Արգամին ու Սմբատին – Սմբատի խորհրդով ամուսնացավ Մաթենիկի հետ – սկսեց շինել քաղաքներ, ճանապարհներ – երկրագործությունը ծաղկեց, սահմանները որոշել – գյուղերի ու կավածների – նավագնացություն, ձկնորսություն» [2, 588]:

Քանի որ դրաման կիսատ է և գործողությունների ընթացքն ու հաջորդականությունը հաճախ խեղաթյուրված են, սյուժետային զարգացման մեջ նկատելի են հատվածներ, որտեղ հեղինակը մեկ կամ երկու նախադասությամբ նկարագրում է որևէ կերպարի, այնուհետև շարունակում խոսքը այլ կերպարի մասին:

Իրադարձությունների հետագա ընթացքը թույլ է տալիս ենթադրել, որ Թումանյանը պետք է ծավալուն նկարագիր տար Արտաշեսի մասին, սակայն այդ հատվածը մնացել է կիսատ, և գործողությունների մեջ երևան է գալիս Արտավազդը, ով ներկայանում է դրամայի կառուցվածքային բոլոր մասերում, և հեղինակը փորձ է անում ցույց տալ Արտավազդի էությունը այլ հերոսների հետ ունեցած առնչությունների համատեքստում: Մեզ հասած հաջորդ հատվածը նվիրված է Մաթենիկին:

Եթե հողվածում Թումանյանը «զգուշանում է» կոնկրետ բնութագրումներ տալ Մաթենիկի կերպարին, ապա այստեղ հստակ նշում է Մաթենիկի դավաճանության մասին՝ ընդգծելով, որ այդ իրավիճակից օգտվում էր Արտավազդը. «Մաթենիկ թագուհի (տիկնանց տիկին)- դուստր պանանց արքայի – 20 տ. [Ար.] որդու մայր. սաստիկ տենչանքով վառվում էր սա դեպի Մարաց [գերիների] նահապետ Արգավանը, որին Արտաշես այնքան պատիվներով մեծարել էր:

Այս սիրով տանջվում էր տիկին Մաթենիկը, որով և առիթ տվեց Արգավանի մահվան, և սրանից օգուտ քաղեց փառասեր Արտավազդը, որը նախանձում էր Արգամին» [2, 591]:

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ Թումանյանը Արտավազդի զայրույթը և Արգավանին ամբաստանելը կապում է ոչ թե Մաթենիկի դավաճանության փաստի իմացության հետ, այլ շարունակում է պնդել, որ հարցը Արտավազդի դիվային էության մեջ է, որ նա չար էր

բնավորությամբ և փառասեր ու մոլի, որ երգում էին, թե վիշապագունք գողացան մանուկ Արտավազդին և դև դրին տեղը: Սաթենիկին նվիրված հատվածը ընդմիջվում է Արգավանի և Մմբատի կերպարների նկարագրությամբ:

Մմբատի մասին Թումանյանը խոսում է ակնածանքով, մանրամասն ներկայացնում այն ծառայությունները, որոնք նա մատուցել է Արտաշես թագավորին և կարևորում է նաև թագավորի վերաբերմունքը նրա հանդեպ: Մմբատի մասին հատվածը ավարտվում է այն բանով, որ Արտավազդը նախանձում է Մմբատին և ցանկանում է սպանել նրան, սակայն Մմբատը ինքնակամ հեռանում է Ասորեստան՝ թողնելով զորքերի իշխանությունը Արտավազդին և մահանում է Արտաշեսից առաջ:

Արգավանի մասին կարծիքն ու նկարագրությունը շատ ընդհանրական է: Թումանյանը բավարարվում է միայն չոր փաստերի արձանագրմամբ՝ չտալով որևէ գնահատական: Արդա ր է Թումանյանի այն տեսակետը, որ դարձյալ մեղավոր է Արտավազդը, կարծում ենք՝ ոչ: Դիտարկենք այս հատվածը. «Արտավազդը նախանձելով սրան, հորը բարկացրեց սրա վրա, թե սա կամենում է թագավորել. սրանից խլեց երկրորդությունը:

Սաթենիկի տենչանքը դեպի սրան եղավ սրա դժբախտությունը, դորա համար ընկավ արքայի աչքից, գրկվեց երկրորդական պատվից, ճաշի ժամանակ ամբաստանվեց և մահվան դատավճռի ենթարկվեց բոլոր ցեղով» [2, 594]:

Այսինքն՝ ըստ Թումանյանի, Արգավանի մահվան դատավճռի պատճառը ոչ թե կապն էր Սաթենիկի հետ, այլ Արտավազդի ամբաստանությունը, ինչը շատ կասկածելի տեսակետ է:

Անավարտ դրամայի վերջին հատվածը նվիրված է Արտավազդին: Թումանյանը պատկերավոր ներկայացնում է հոր և որդու վերջին խոսակցությունը. «Սյունագարդ պալատում գիշերում, մինչ անքուն տանջվում էր Արտավազդը, հոր ուրվականը երևաց սրան և վշտացած հարցրեց, թե ինչու է նախանձում յուր մահին:

– Մինչ դու գնացիր, ամենը տարար...

– Յորժամ յորս հեծնես...

Տեսարանից ու արքայի անեծքից խելագարված Արտավազդը գիշերը գարթեցնում է հրամայում առավոտը վաղ որսի երթալ: Ապարանքի լուսամուտներից նայում են՝ ինչպես է ձին քշում խելագար արքան» [2, 596]:

Թե ինչպիսի ավարտ կունենար դրաման, դժվար է կանխագուշակել, սակայն գրականագետներ Արամ Ինճիկյանը և Եվա Մնացականյանը ներկայացնում են դրամայի գործողությունների ընթացքի և ավարտի իրենց տեսլականը: Դերենիկ Դեմիրճյանը ևս ներկայացնում է դիտարկումներ դրամայի ընթացքի մասին: Նախ անդրադառնանք նրա տեսակետին:

Դերենիկ Դեմիրճյանը Հովհաննես Թումանյանի մտերիմն էր, և նրանց զրույցները գրականության մասին հաճախ ձգվում էին մինչև առավոտ: Դեմիրճյանին շատ էր հետաքրքրում, թե ինչ ընթացք է ստանալու դրաման. «Ես չէի հասկանում մի բան, թե ինչու էր Թումանյանը մշակում այդ նյութը, ուր նրա համար այդպիսի մի վեհ թագավոր-հոր պիտի հակադրեր նման մի չարախոս որդի: Իմ տարակուսանքները, սակայն, հետագայում ցրվեցին: Թումանյանին հետաքրքրում էր ոչ իր անձնական հակառակությունը իր հոր դեմ, այլ մի ուրիշ բան: Նա շատ էր պատմում իր համագյուղացիների մասին, որոնք խլել էին իրենց հողմաստերը՝ ոտնատակ տալով այն բոլոր լավությունները, որ արել էր նրանց իր հայրը...» [1, 26]:

Մի կողմից Թումանյանի մտապատկերում Արտաշես-հոր իդեալական կերպարն էր, իսկ մյուս կողմից՝ համաշխարհային գրականության դրամաներից իր համար առանցքային կերպարներ դարձած Համլետը և Դոն Բիխոտը: Թումանյանը ներքին կոիվ էր մղում այս կերպարների զուգակցման համար: Իր կերտած Արտավազդը հակապատկերն էր Համլետի,

որովհետև ժողովրդական բանահյուսությունն ասում էր, որ Արտավազը դև է, նախանձ, իսկ Թումանյանն անվերապահորեն հավատում էր:

Գրականագետ Արամ Ինճիկյանը նշում է, որ Թումանյանը մանրամասն ուսումնասիրում է Սաթենիկի վերաբերյալ Խորենացու մեջբերած հատվածը, փորձում է գտնել մեկնության տարբերակներ, սակայն դրամայի պլոթեի հիմքում նա չէր դնելու դավաճանված արքայի ողբերգությունը, այլ հայր և որդի հակասությունը. «Ոչ նվազ հավանական է, որ «Արտավազը Բ»-ում Թումանյանին զբաղեցրել է հոր և նախանձոտ, երախտամոռ որդու դրաման, որով բանաստեղծի այդ ողբերգությունն առնչակցվում է Շեքսպիրի «Արքա Լիր»-ին: Թումանյանի արխիվում պահպանված «Արտավազը Բ-ի սևագրության այն պատատիկը, որ բերում ենք ամբողջությամբ, հիմք է տալիս նման մեկնության. «Արտավազը (նախանձ)».

«Նախանձնեց հոր թաղման փառավորությանը: Առաջ վրդովեցնող երազներ է տեսնում, կանչում երազահան մոզպետին: Տանջվում է:

Սյունագարդ պալատում գիշերով, մինչ անքուն տանջվում էր Արտավազը, հոր ուրվականը երևաց նրան և վշտացած հարցրեց, թե ինչու է նախանձում յուր մահվան:

– Մինչ դու գնացիր, ամենը...

– Յոթամ յոթս հեծցես...

Տեսարանից ու արքայի անձեքից խելագարված Արտավազը (գիշերը) զարթեցնում է և հրամայում առավոտը վաղ որսի երթալ [Ապարանքի լուսամուտներից նայում են՝ ինչպե՛ս է ձին քշում խելագար արքան]» [7, 529-530]:

Ինճիկյանը նշում է, որ սյուժետային այս գիծը ավելի հավանական է դառնում, երբ համադրում ես Դեմիրճյանի տեսակետն ու Թումանյանից մեզ հասած հատվածը:

Եվա Մնացակայանը մեկ ամբողջական հոդված է նվիրել Թումանյանի «Արտավազը» դրամային, որտեղ անդրադարձել է դրամայի գրության շարժառիթներին, նախապատմությանը և կատարել է հոգեբանական հնարավոր զարգացումների քննության փորձ: Գրականագետը նախ նշում է, որ Թումանյանի դրաման չավարտելու պատճառներից է այն հանգամանքը, որ հեղինակին չի հաջողվել ամբողջությամբ վերծանել ժամանակաշրջանի որոշ իրողություններ, ինչը «խանգարել է» ավարտին հասցնել դրաման: Մանրամասն քննելով դրամայի գաղափարական բուրբ կողմերը՝ նա նշում է. «Կարող ենք ընդհանրացնել՝ Թումանյանի դրամայի կենտրոնական հերոսը լինելու էր պատմական Արտավազը, որի զգայական հայեցումների աշխարհը պարզունակ չէ: Թեև կերպարի բնութագրիչ հատկանիշը նախանձն է, սակայն նրա ներաշխարհային զարգացումները հաճախ են անակնկալի բերում իշխանատենչության, դաժանության ու մարդատյացության անըմբռնելի շրջապտույտով: Թե՛ օտարների, թե՛ հարազատների նկատմամբ չարության ու նենգության դրսևորումները հիմք են դառնում հոր՝ Արտաշեսի ներքին ողբերգության ծավալմանը: Թումանյանին մտահոգում է այդ տառապանքի ծանրությունը, որը հանգեցնում է որդեկործան անձեքի: Հայր-որդի կերպարային հակասությունն ամփոփում է մարդկային համարժեք տեսակներին հատուկ հոգեբանությունն ու աշխարհայեցությունը, կրքերն ու մտապատրանքները» [8, 107-108]:

Մեր կարծիքով Թումանյանը դրաման գրելիս քաջատեղյակ էր նաև Արտավազի կերպարի մեկնության մյուս տարբերակին և նպատակ ուներ ներկայացնել անձի ողբերգությունը՝ ցույց տալով այդ ողբերգության պատճառական կապը ընտանիքի և հասարակության հետ: Դժվար է ասել, թե ինչու հեղինակը չցանկացավ ավարտել դրաման, սակայն միգուցե Վերնատանն անցկացրած քննարկումները դարձան պատճառ, որ մի քանի տարի անց Լևոն Շանթը «Շղթայվածը» դրամայում անդրադառնա Արտավազի կերպարին: Միգուցե...

Եզրակացություն

Ամփոփելով՝ Հովհաննես Թումանյանի «Արտավազ» անավարտ դրաման ոչ միայն առասպելաբանական սյուժեի գեղարվեստական վերամշակում է, այլև խորապես ազգային և փիլիսոփայական մտահոգությունների արտահայտություն: Արտավազի կերպարի միջոցով հեղինակը փորձում է բացահայտել իշխանության, ճակատագրի և ազատության բարդ հարաբերությունները՝ դրանք դիտարկելով ոչ միայն որպես անհատի ողբերգություն, այլև որպես ժողովրդի ճակատագրի խորհրդանիշ:

«Արտավազ»-ը նախատեսված էր որպես մեծածավալ ազգային ողբերգություն: Թումանյանը ձգտում էր դիցաբանական նյութը վերափոխել փիլիսոփայական դրամայի, ինչը պահանջում էր խոր մտածում և կառուցվածքային հստակություն: Հնարավոր է՝ նա դեռ փնտրում էր կերպարների վերջնական գաղափարական լուծումը և չէր գոհանում արդեն գրված տարբերակներից:

Այսպիսով, «Արտավազ»-ը իր անավարտ լինելու պայմաններում նույնիսկ մնում է հայ գրականության արժեքավոր ստեղծագործական նախաձեռնություններից մեկը՝ վկայելով Թումանյանի լայն մտահորիզոնի, ազգային մտածողության խորության և դիցաբանական նյութի նորարար մեկնաբանման մասին:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-55>

Գրականություն

1. Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 2009, էջ 25:
2. Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հատոր 5, էջ 588, Երևան, 2022:
3. Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հատոր 6, էջ 18, Երևան, 1994:
4. Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հատոր 8, էջ 339, Երևան, 1995:
5. Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հատոր 9, էջ 136, Երևան, 1997:
6. Թումանյան Ն., Հուշեր և գրույցներ, Երևան, 2009, էջ 206:
7. Ինճիկյան Ա., Հովհաննես Թումանյան, կյանքը և ստեղծագործության պատմությունը, Երևան, 1969, էջ 529-530:
8. Մնացականյան Ե., Դիտարկումներ Հովհ. Թումանյանի «Արտավազ» անավարտ դրամայի շուրջ, // «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2023, № 1, էջ 107-108:

Незавершенная драма Ованнеса Туманяна «Артавазд»: мотивы написания и возможный ход событий

Бояджян Астхик

Резюме

Ключевые слова: Мовсес Хоренаци, литературные интерпретации, Вернатун, фольклорный анализ

Незавершённая драма Ованнеса Туманяна «Артавазд» была создана на основе древних армянских мифов и задумывалась как великая национальная трагедия. В произведении Туманян стремился показать царя Артавазда как сильную, но противоречивую личность, чья судьба определяется гордостью, стремлением к власти и предначертанием.

Через мифологический сюжет автор хотел выразить более глубокие идеи: конфликт человека с судьбой, борьбу народа за свободу и значение национального самосознания. Драма отражает попытку соединить исторический, фольклорный и философский аспекты в художественной форме, опираясь на литературные источники, включая Мовсеса Хоренаци и другие ранние тексты.

Несмотря на незавершенность, «Артавазд» занимает важное место в армянской литературе, показывая стремление Туманяна создать драматическое произведение с глубоким идеологическим и национальным значением. Работа также открывает пространство для литературных интерпретаций и анализа возможного развития событий, позволяя исследователям реконструировать мотивы героев и ход драматического действия на основе фольклорных и исторических материалов.

Hovhannes Tumanyan's Unfinished Drama "Artavazd": Motives for Writing and Possible Course of Events

Boyajyan Astghik

Summary

Key words: Movses Khorenatsi, literary interpretations, Vernatun, folklore analysis

Hovhannes Tumanyan's unfinished drama "Artavazd" was created on the basis of ancient Armenian myths and intended as a major national tragedy. In the work, Tumanyan sought to portray King Artavazd as a strong yet conflicted figure, whose destiny is shaped by pride, the pursuit of power, and historical fate.

Through this mythological narrative, the author aimed to explore deeper themes, including the struggle of individuals against destiny, the quest of people for freedom, and the cultivation of national consciousness. The drama combines historical, folkloric, and philosophical elements, drawing on literary sources such as Movses Khorenatsi and other early Armenian texts.

Although the drama remains incomplete due to complex historical circumstances, Tumanyan's creative explorations, and his untimely death, Artavazd holds a significant place in Armenian literature. It illustrates the author's effort to craft a dramatic work of profound ideological and national importance. Moreover, the text provides a foundation for literary interpretations and reconstructions of potential plot developments, allowing scholars to analyze character motives and the possible course of events based on folklore and historical traditions.

Ներկայացվել է 05. 12. 2025 թ.

Գրախոսվել է 18. 12. 2025 թ.

Շնորհովել է սպազորույթան 27. 05. 2026 թ.